Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-335[1]-23.09.2013-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-164-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 11-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«արհեստագործական ուսումնարան՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է արհեստագործական կրթական ծրագիր.».

2. 12-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«քոլեջ՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր.».

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 9-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«9) արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության մատչելիությունը, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմաններ տրամադրելու եւ ներառման միջոցով.»,

2. 2-րդ մասը լրացնել նոր 4-րդ կետով՝ *հետեւյալ բովանդակությամբ*.

«4) մասնագիտական կրթություն եւ ուսուցում ստանալու հավասար հնարավորություններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման եւ ներառման միջոցով:».

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 18.1. հոդվածով.

«ՀՈԴՎԱԾ 18.1. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԸ ԵՎ ՆՐԱ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն, բացառությամբ՝ ոստիկանության ուսումնական հաստատության համապատասխան ստորաբաժանումների պետերի, կարող է ընտրվել կամ նշանակվել այն անձը, ով ունի արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) (այսուհետեւ՝ Հավաստագիր):

2. Արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենն ընտրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մրցութային կարգով:

3. Արհեստագործական եւ միջին մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատության տնօրենը, ինչպես նաեւ ուսումնական հաստատության արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը նշանակվում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

4. Արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին կարող է մասնակցել, իսկ արհեստագործական եւ միջին մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատության տնօրեն, ինչպես նաեւ ուսումնական հաստատության արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավար կարող է նշանակվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված եւ Հավաստագիր ստացած անձը:

5. Հավաստագիր ստանալու համար կարող է դիմել այն անձը, ով ունի բարձրագույն կրթություն, սույն օրենքով սահմանված կարգով ստացած վերապատրաստման վկայական եւ վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի առնվազն 5 կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն 3 կամ կառավարման ոլորտի առնվազն 5 կամ մասնագիտական առնվազն 5 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

6. Հավաստագիր ստանալու համար դիմած անձի վերապատրաստում կարող են իրականացնել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով ընտրված (երաշխավորված) կազմակերպությունները:

7. Հավաստագրումն անցկացվում է հետեւյալ փուլերով.

1) փաստաթղթերի համապատասխանության ճանաչում՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած փաստաթղթերի ցանկի.

2) քննություն՝ թեստավորման եւ հարցազրույցի միջոցով.

3) Հավաստագրի շնորհում՝ հինգ տարի ժամկետով:

8. Հավաստագրման քննությունների կազմակերպման եւ հավաստագրման ընթացակարգերը, ինչպես նաեւ հավաստագրման հանձնաժողովի կազմավորման եւ գործունեության կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

9. Հավաստագրումը կազմակերպվում է առնվազն տարին մեկ անգամ:

10. Հավաստագրման գործընթացի մասին հայտարարությունը հրապարակվում է քննություններն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի եւ զանգվածային լրատվության այլ միջոցներով:

11. Հավաստագրման քննությունների հարցաշարի բովանդակությունը կազմվում է կրթության բնագավառում իրավական, կառավարչական, մանկավարժական, հոգեբանական, ուսուցման մեթոդաբանության վերաբերյալ գիտելիքները եւ գործնական կարողությունները ստուգելու նպատակով:

12. Հավաստագրման քննությունը հավաստագրման ընթացակարգով հանձնած անձին շնորհվում է Հավաստագիր:

13. Հավաստագիր ստացած անձանց ցուցակը հրապարակում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ հավաստագրման ընթացակարգով սահմանված ժամկետում:

14. Հավաստագրման քննության արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնին՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

15. Հավաստագիր ստացած անձը կարող է Հավաստագիրը ստանալու օրվանից հետո հինգ տարվա ընթացքում մասնակցել արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին, իսկ ոչ պետական ուսումնական հաստատության, ինչպես նաեւ ուսումնական հաստատության արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման դեպքում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակվել ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:

16. Արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար տնօրենի թեկնածուն խորհրդին ներկայացնում է՝

1) կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած ցանկին համապատասխան փաստաթղթերը.

2) Հավաստագիրը.

3) ուսումնական հաստատության զարգացման 5 տարվա ծրագիրը:

17. Արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թեկնածուի ղեկավարման գործնական հմտությունները ստուգելու նպատակով խորհուրդն անցկացնում է հարցազրույց՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած հարցաշարի հիման վրա:

18. Մրցույթում հաղթած եւ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի ղեկավարի հետ աշխատանքային պայմանագիր կնքած արհեստագործական կամ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենը պաշտոնավարում է մինչեւ իր լիազորությունների ավարտը՝ անկախ Հավաստագրի հնգամյա ժամկետի լրանալուց, իսկ ոչ պետական ուսումնական հաստատության տնօրենը, ինչպես նաեւ ուսումնական հաստատության արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը պաշտոնավարում է մինչեւ հավաստագրի ժամկետի լրանալը:

19. Հավաստագիր ստացած անձը կարող է մինչեւ Հավաստագրի ժամկետի լրանալը դիմել եւ սահմանված կարգով հավաստագրվել:

20. Արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն չի կարող առաջադրվել եւ ընտրվել (նշանակվել) այն անձը, ով՝

1) սահմանված կարգով չի ստացել ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր.

2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) դատական կարգով զրկվել է մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

4) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեությանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է կառավարությունը.

5) դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

21. Արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենը՝

1) խորհրդի քննարկմանն է ներկայացնում արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, արտաքին եւ ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.

2) պատասխանատու է մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների (որակավորման չափորոշիչների) եւ կարողությունների զարգացմանը միտված մոդուլային ուսուցման ծրագրի կատարման չափանիշներն ապահովող համապատասխան կրթության եւ ուսուցման գործընթացի կազմակերպման, ուսանողների առողջության պահպանման, կադրերի ընտրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաեւ օրենքով եւ արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար.

3) ղեկավարում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը, աջակցում է տվյալ ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքին.

4) կազմում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը եւ տվյալ ուսումնական հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնում լիազոր մարմին.

5) խորհրդի հավանությանն է ներկայացնում արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը.

6) իրականացնում է օրենքով եւ տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:»:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ օրենքի 18.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերի դրույթները չեն տարածվում մինչեւ օրենքի ուժի մեջ մտնելը ընտրված (նշանակված) արհետագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների վրա՝ մինչեւ օրենքով սահմանված նրանց լիազորությունների ժամկետի ավարտը: Իսկ անժամկետ պայմանագրով պաշտոնավարող տնօրենները մինչեւ *2015* թվականի օգոստոսի 1-ը վերապատրաստվում են, ստանում հավաստագիր եւ մասնակցում տնօրենի ընտրության մրցույթին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի: Իսկ արհեստագործական եւ միջին մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատությունների տնօրենները, ինչպես նաեւ ուսումնական հաստատությունների արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումների ղեկավարները մինչեւ *2015* թվականի օգոստոսի 1-ը վերապատրաստվում են եւ մասնակցում հավաստագրմանը: Հավաստագիր չստացած տնօրենի լիազորությունները դադարեցվում են:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
պատգամավորներ Հ.Բիշարյան, Հ.Մարգարյան, Լ.Դոխոլյան	«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 2-ի 4-րդ կետի «վերջակետը» փոխարինել «ստորակետով» և ավելացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակութ-յամբ. «բացառությամբ նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատություն հիմնական կրթության հիմքով՝ այսինքն 9 ամյա կրթությամբ ընդունված և բարձր առաջադիմությամբ ավարտած քաղաքացիների՝ որոնք կարող են ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատության 2-րդ կուրս հարցազրույցի միջոցով և այն քաղաքացիների, որոնք նախնական և միջին	Ընդունվել է մասամբ :	Նախագծում առաջարկվող լրացումը ընդունվել է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտ-ների մասով, և զետեղվել է նախագծի 3-րդ հոդվածում

	մասնագիտական կրթական հաստատությունն ավարտել են բարձր առաջադիմությամբ, կարող են ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա բաժինների 2-րդ և 3-րդ կուրսերը հարցազրույցի միջոցով»:		
ՀՀ կառավարություն	1.«Նախնական մասնագիտական /արհեստա-գործական/ և միջին մասնագիտական կրթու-թյան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 5-ի 2-րդ մասում «2014» թիվը փոխարինել «2015» թվով: 2. Հոդված 5-ում ավելացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված՝ Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության դրույթները տարածվում են 2014 թվականին և դրանից հետո միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված ուսանողների վրա:	Ընդունվել է: Ընդունվել է:	Առաջարկվող փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է օրենքի ընդունման ժամկետների հետ: Հոդվածը խմբագրվել է:

	2 Օրենսդրական տեխնիկայի տեսակետից՝ 1/ «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը «4-րդ կետով» բառերից հետո լրացնել «հետևյալ բովանդակությամբ» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջների: Նույն առաջարկությունը վերաբերում է նաև նախագծի 4-րդ հոդվածին: 2/ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ա) 1-ին հոդվածում «8^1 » թիվը փոխարինել «8.1» թվով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների: բ) 5-րդ հոդվածից հանել «Անցումային դրույթներ» բառերը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի պահանջների: Նույն առաջարկությունը վերաբերում է նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի	Ընդունվել է.	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ.

	նախագծի 3-րդ հոդվածին: գ) 4-րդ հոդվածում «բառով» բառը փոխարինել «բառերը» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջների:		